ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴԱՍՎԱՐ

ԹԵՄԱ՝ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Կազմեց՝ Աբրահամյան Անահիտ

«Մեղրու թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..……3

Գլուխ առաջին

ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Միջառարկայական կապերի դերը կրտեր դպրոցականի ճանաչողական գիտելիքների հարստացման գործընթացում……..……..5

1.2 Միջառարկայական կապերի հաստատման հնարավորությունները «Մայրենի 2» դասագրքում ……..9

Գլուխ երկրորդ

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ

2.1 Միջառարկայական կապերի հաստատման միջոցները և դրանց դերը բառապաշարի հարստացման գործընթացում……19

2.2. Օրվա պլան……..…….24

Եզրակացություններ……..…….28

Գրականության ցանկ.....30

Հավելված 1

Հավելված 2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մեզ շրջապատող աշխարհում բոլոր երևույթները կապված են միմյանց հետ: Հենց այս միասնության մեջ էլ երեխան ընկալում է աշխարհը, հասկանում այն, թափանցում նրա էության մեջ՝ միշտ աչքի առաջ ունենալով ամբողջությունը: Այսօր դժվար է պատկերացնել բազմակողմանի զարգացման ու համակողմանի դաստիարակության պատասխանատու պահանջի իրականացումը՝ առանց միջառարկայական կապերի օգտագործման, առանց երեխաների հետաքրքրությունների բավարարման ու ինքնուրույնության զարգացման: Միջառարկայական կապերը մեծ հնարավորություն են ստեղծում ոչ միայն արդեն անցած կամ մյուս առարկաներից ստացած գիտելիքների ու դրանց գործադրման ուղղությամբ ձեռք բերած կարողությունների ու հմտությունների փոխանցման, այլև նոր գիտելիքներ ձեռք բերելու, նոր տեղեկություններ հաղորդելու առումով:

Մայրենի լեզուն իր մեջ ամփոփում է գրեթե բոլոր աշխարհաճանաչողական տեղեկություններն ու գիտելիքները և դրանց փոխանցման հիմնական միջոցն է. պետք է պայմաններ ստեղծել մայրենիի դասավանդման ընթացքում միջառար-կայական կապերի իրականացման ճանապարհով աշակերտների կողմից բազմա-բաղադրիչ գիտելիքների ձեռքբերման համար, որի մեջ կարևորագույն դերը բա-ռապաշարի հարստացումն է, քանի որ ճանաչողական գիտելիքների ձեռքբերման գործընթացը միահյուսված է նոր բառապաշարի ուսուցման հետ: Այսինքն՝ այս խնդրի լուծմանն է ուղղված մայրենիի դասերի կազմակերպումը:

Հետազոտության նպատակը տարրական դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի միջոցով բառապաշարի հարստացման հնարավորությունների ու միջոցների դիտարկումն է:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ներկայացնել միջառարկայական կապերի դերը կրտեր դպրոցականի ճանաչողական գիտելիքների հարստացման գործընթացում.
2. քննարկել միջառարկայական կապերի հաստատման հնարավորու-թյունները «Մայրենի 2» դասագրքում.
3. ուսումնասիրել «Մայրենի 2: դասագրքում բառապաշարի հարստաց-ման հնարավոր մի քանի ուղղություններ.
4. բացահայտել միջառարկայական կապերի հաստատման միջոցները և դրանց դերը բառապաշարի հարստացման գործընթացում:

Հետազոտության վարկածն է՝ մայրենիի ուսուցման դասերին միջառար-կայական կապերի հաստատումը հնարավորություն է տալիս հարստացնելու կրտսեր դպրոցականի բառապաշարը:

Հետազոտության տեսագործնական նշանակությունը: Ուսումնասիրությունը գիտամեթոդական գրականության և գործնական-հետազոտական վերլուծություն-ներով կարող է օգտակար լինել ինչպես ապագա դասվարների, այնպես էլ գոր-ծող ուսուցիչների համար:

Առաջադրված խնդրի լուծման համար օգտագործել ենք **հետազոտության** հետևյալ **մեթոդները՝** գործունեության արդյունքների ուսումնասիրման, սեփական փորձի վերլուծության, դիտման, գիտափորձի, հարցաթերթիկների:

Հետազոտության ծավալն ու կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքում ներառված են 3 գծապատկեր, 10 դիագրամ: Աշխատանքի ծավալը կազմում է 60 էջ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Միջառարկայական կապերի դերը կրտսեր դպրոցականի ճանաչողական գիտելիքների հարստացման գործընթացում

Մեր ժամանակներում տարրական ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են:

Ի. Դ Զվերևը գտնում է, որ միջառարկայական կապերը հանդիսանում են հիմնական դիդակտիկական սկզբունքի՝ համակարգվածության սկզբունքի մի կողմը: «Միջառարկայական կապերը իրենցից ներկայացնում են համակարգվածության՝ ընդհանուր մեթոդաբանական սկզբունքի կոնկրետ մի ձև, որն առաջանում է մտավոր գործունեության հատուկ տեսակը՝ համակարգային մտածողություն[1]:

Մեզ շրջապատող աշխարհում բոլոր առարկաներն ու երևույթները գտնվում են դիալեկտիկական անխզելի կապերի մեջ: Այս առումով աշխարհը, իրերն ու երևույթները միասնական են: Հենց այս միասնության մեջ էլ երեխան ընկալում է աշխարհը, թափանցում նրա էության մեջ՝ միշտ աչքի առջև ունենալով ամբողջությունը, որը և ծնել է միջառարկայական կապերի օգտագործման անհրաժեշտությունը:

Այն ամենից շատ ու ամենից արդյունավետ ձևով կարելի է իրականացնել մայրենի լեզվի դասերին, մայրենի լեզվի միջոցով, մայրենի լեզվի միջնորդությամբ:

Մայրենի լեզուն տարրական դասարաններում դասավանդվող առարկաների դասերին միջառարկայական կապեր ստեղծելու գործում բացառիկ դեր է կատարում: Բառապաշարի հարստացման, շարահյուսական, ձևաբանական և այլ առումներով աննախադեպ զարգացում է ապրում կրտսեր դպրոցականի խոսքը:

[1] Зверев И.Д. Взаимная связ учебхих предметов.-М. 1977.-213с…

Ուսումնական աշխատանքում ամեն մի միջոցառում իր որոշակի տեղն ու դերը պետք է ունենա և՛ ժամանակի, և՛ գործադրության տեղի ու ձևի առումով, այլապես այն կդառնա ինքնանպատակ, չի դառնա նրա կայուն բաղադրիչը: Եթե միջառարկայական կապերը հեշտ ու տեղին, չափավոր ու նպատակային չօգտագործվեն, ակամա դրանք կարող են դասի պրոցեսի հիմնական մեխը դառնալ և դասի բուն նպատակը մղել երկրորդ պլանի վրա, դարձնել անկարևոր:

Ռուս ականավոր մանկավարժ Կ. Դ. Ուշինսկին միջառարկայական կապերի ստեղծումն ու կենսագրությունը համարում էր ուսուցման կարևորագույն նպատակներից մեկը: Հաշվի առնելով գիտությունների կառուցվածքը՝ նա նշել է, որ, բացի հատուկ հասկացություններից, որոնք պատկանում են յուրաքանչյուր գիտությանը, կան հասկացություններ, որոնք ընդհանուր են բոլորի համար:

Վ. Ն. Մաքսիմովան նշում է, որ միջառարկայական կապերը նպաստում են ուսուցման բովանդակության մեջ գիտականության սկզբունքի իրականացմանը: Դրանք նախատեսված են սովորողների գիտակցությանը հասցնելու բոլոր առարկաների ընդհանրությունները և ցույց տալու յուրաքանչյուր ուսումնական առարկայի մեջ բովանդակության յուրահատկությունները[2]:

Գիտելիքների ձեռքբերումը և կարողությունների ձևավորումը սերտորեն կապված են միմյանց հետ և մեկը մյուսի համար հիմք ու ելակետ է: Հետևաբար, երեխաներին շրջապատի աշխարհի մասին հնարավորին չափ բազմակողմանի ու ընդարձակ տեղեկություններ տալ, ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը կարևոր ու վճռող նշանակություն ունի երեխաների աշխարհաճանաչողության համար:

Մայրենի լեզվի դաերին միջառարկայական կապերի գործադրման երեք կարևոր եղանակներ կան:

1. Առաջինը ուսուցման պրոցեսում անրադարձ կապերի օգտագործումն է, որն ամենից առաջ կապվում է ներառարկայական կապերի ճի՛շտ ու տեղին օգտագործման հետ: Այն, ինչ աշակերտներն անցել են նախորդ դասերին կամ ուսման նախորդ տարիներին, հետևողականորեն պետք է

[2] Максимова, В. Н., Межпредметные связн в процессе обучения, -М. Просвещение, 1988. с 191.

կրկնվի, ամրապնդվի, դառնա կարողություն, հիմք ծառայի նորի յուրացման համար և կապվի նորի հետ:

2. Մյուս կարևոր եղանակը ձեռքբերված գիտելիքների ու կարողությունների փոխանցումն է ուսուցման պրոցեսում: Բազմաթիվ գիտելիքների ու կարողություններ, որոնք երեխան ձեռք է բերել առաջ, պետք է հմտորեն օգտագործել ուսուցման պրոցեսում:
3. Երրորդ ձևը այլ գիտությունների կիրառությունն է, որը նույնպես լայնորեն կարող է գործադրվել ուսուցման պրոցեսում: Եթե ուսուցիչը ցանկանում է իր պարապած լեզվի դասը լիարժեք ու նպատակային լինի, կամա թե ակամա պետք է դիմի տարբեր գիտությունների տվյալների ու փաստերի օգտագործմանը, որպեսզի դասը հետաքրքիր, ուսանելի ու դաստիարակչական դառնա:

Շվեցարացի հայտնի հոգեբան Ժան Պիաժեն 1966թ. Մոսկվայում կայացած հոգեբանների 18-րդ կոնգրեսում հիմնավորեց միջառարկայական կապերի հսկայական դերը և՛ ճշտգրիտ, և՛ հումանիստ գիտությունների հետագա զարգացման գործընթացում[3]:

Տարրական դասարաններում դրվում են բոլոր գիտելիքների ու կարողությունների հիմքերը, երեխաների առջև բացվում են բոլոր փակ դռները: Նրանք աստիրճանաբար հաղորդակից են դառնում դարերի ընթացքում մարդկության ստեղծած հսկայական մշակույթային ժառանգությանը, ծանոթանում են բնության գաղտնիքներին, հարստանում է նրանց խոսքն ու մտածողությունը: Երեխաներին պետք է սովորեցնել շրջապատի աշխարհում տեսնել ու գնահատել գեղեցիկը, լավն ու բարին և գնալ այդ ճանապարհով, նվիրվել աշխարհի ու մեր կյանքի գեղեցկացմանը:

Իսկ դրա համար տարրական դասարանների մայրենի լեզվի դասերը լայն հնարավորություններ են ստեղծում, որովհետև այդ դասերն իրենց մեջ ամփեփում են արվեստի տարբեր ձևերի, գիտությունների, տեխնիկայի ու

[3] Նանյան Լ.Ա., Միջառարկայական կապերի իրականացումը տարրական դասարաններում որպես գեղագիտական դաստիարակչության օպտիմալացման միջոց, Երևան 2003, էջ 11-12:

տարաբնույթ այլ հարցերի վերաբերյալ եղած տարրական տեղեկությունները:

Այս առումով մայրենի լեզվի դասերը կարելի է դարձնել հարուստ, բազմակողմանի ու բազմաբնույթ, աշակերտներին գաղափար տալ արվեստի տարբեր ձևերի, տարբեր գիտությունների, մարդկանց ու պատմողական իրադարձությունների մասին: Երեխաներն առաջին դասարանից գործ ունեն գեղարվեստական տարբեր ստեղծագործությունների՝ պատմվածքների, հեքիաթների, բանաստեղծությունների, առակների, հանելուկների, առածների, ասացվածքների, շուտասելուկների հետ, որոնք խոսքարվեստի դրսևորման ձևերից են: Եթե նկարիչը նկարում է, քանդակագործը կերտում է, երգահանը հորինում, ճարտարապետը կառուցում, ապա գրողն ու բանաստեղծն էլ խոսքի տարբեր ձևերի հորինողներն են:

Խոսքարվեստի կրթադաստիարակչական այդ մեծ ու անսպառ հնարավորության օգտագործման անհրաժեշտ ու մատչելի ձևը ընթերցումն է: Ընթերցումից պարզ կարող է երևալ, թե նրանք ինչպես են այն վերակենդա-նացնում, ինչ հույզեր, ապրումներ զգացմունքներ են դնում իրենց կարդա-ցածի մեջ: Դասերին լայնորեն օգտագործվում է նաև անգիր արտասանու-թյունը, պատմումը: Վերջինս իր որոշակի տեղն ու դերն ունի ընթերցա-նության յուրաքանչյուր դասում: Հիմնական նպատակներից մեկն էլ աշա-կերտների բանավոր խոսքի զարգացումն է՝ պատմելու, խոսք կառուցելու կարողության ձևավորումը:

Հեքիաթը խոսքարվեստի այն ամենաառաջին ու ամենամատչելի ձևերից մեկն է, որին երեխան հաղորդակցվում է վաղ մանկական տարիքից: Այդ հեքիաթներից շատերը ուսուցիչը ոչ թե կարդալու, այլ բանավոր վերարտադրելու միջոցով պետք մատուցի՝ օգտագործելով ժողովրդական հեքիաթասացության տարրերը՝ իր խոսքը բարձրացնելով խոսքարվեստի մակարդակին:

Դպրոցներում գործում են նաև ասմունքի խմբակներ, որտեղ ընդգրկված են տաղանդավոր ասմունքող աշակերտներ: Այսպիսով՝

խոսքարվեստի տարրերը հաջողությամբ են գործադրվում մայրենիի դասերին և դրանք դարձնում են խորապես ուսանելի, կրթական ու դաստիարակչական տեսակետից նպատակաուղղված և արդյունավետ:

Երբ առարկան զուգակցվում է այլ առարկաների հետ, այդ կերպ դասը դառնում է ինտեգրված, առարկայի դասավանդումն առավել արդյունավետ է դառնում: Բոլոր առարկաները կապված են իրար հետ, իսկ առարկաների միջև բացակայող կապերն ուղղակի անհրաժեշտ է, որ մենք նկատենք և ուղիներ գտնենք:

1.2 Միջառարկայական կապերի հաստատման հնարավորությունները «Մայրենի 2» դասագրքում

Միջառարկայական կապերի կիրառումը նախ նպաստում է աշակերտի բազմակողմանի զարգացմանը, ապա դասն ավելի հետաքրքիր և դյուրընկալ է դարձնում: Առհասարակ, տարբեր առարկաների համադրությունը, միջառարկա-յական կապը կարևոր է թե՛ տվյալ առարկայի, թե՛ հարակից առարկաների ուսուցման գործում:

Միջառարկայական կապերի ինտեգրումը մայրենի լեզվի ուսուցչին լայն հնարավորություն է ստեղծում լրացնել աշակերտների գիտելիքների պակասը՝ պատմությունից, հայրենի բնությունից, երաժշտությունից ու նկարչությունից: Ուսուցման այս ռազմավարությունը նպաստում է աշակերտների բազմաբնույթ մտածողության զարգացմանը: Նրանց առջև լայն հնարավորություն է ստեղծվում առարկաների միջև առկա կապերի ցուցադրությամբ հաղորդակցվել գիտության ու կյանքի տարբեր բնագավառների զանազան երևույթներին, պատճառահետևանքային կապերին և օրինաչափություններին: Այդ ճանապարհով նրանք աստիճանաբար վարժվում են ինքնուրույն աշխատանքի, որը կարևոր ուղեցույց է դառնալու ինքնուրույն ուսուցման, կատարելագործման ու բազմակողմանի զարգացման առումով:

Կողմնակից եմ տարրական դասարանների մայրենի ՏՀՏ և ՏՀՏ գիտելիքների այնպիսի գործնական օգտագործմանը, որպես միջառարկայական կապերի օգտա-գործման ձևերից մեկի, որը ոչ միայն դասը կհարստացնի նոր տարրերով, հնա-րավորություն կտա տեխնիկայի արդի նվաճումները ճիշտ, տեղին ու ժամանակին օգտագործելու դասի պրոցեսում, այլև կնպաստի երեխաների տեխնիկական մտածողության զարգացմանը, կկրթի ու կդաստիարակի ժամանակակից մարդիկ:

Մայրենի լեզվի դասերին գիտատեխնիկական ինֆորմացիայի կարիքն ամեն օր ու ամեն վայրկյան կարող է ծագել: Դա ժամանակի պահանջն է ոչ միայն դասի բովանդակությունն ապահովելու, այլև միջառարկայական կապերի պահպանման առումով: Զուտ մայրենի լեզվի դաս չկա և չի կարող լինել, այն բազմաբնույթ, բազմակողմանիորեն հագեցած, հարուստ ու բազմաբովանդակ դաս պետք է լինի, և ուսուցիչը պետք է լավ պատրաստված լինի այդպիսի աշխատանք տանելու հա-մար: Ներկայիս ուսումնական հաստատությունները հիմնականում ապահովված են համակարգիչներով ու ժամանակակից տեղեկատվական միջոցներով: Ունեն բա-վարար քանակությամբ ցուցադրություններ, տեսա-լսողական սարքեր, որոնք խթա-նում են ուսումնական գործընթացը՝ այն դարձնելով բովանդակալից, հագեցած և ամբողջական: Տեխնիկայի օգտագործման շնորհիվ գիտելիքների, պատմական և ազգային, գեղագիտական ու բարոյական արժեքների ձեռք բերման լայն հնարա-վորություն կարող է ստեղծել: Շատ կարևոր է այստեղ նաև ուսուցչի մասնագիտա-կան պատրաստվածությունը: Ապահովելով միջառարկայական կապը՝ ուսուցիչը մարենիի դասը պետք է դարձնի բազմաբնույթ, հարուստ, հագեցած ու հետաքրքիր:

Միջառարկայական կապերը ցանկացած առարկայի ուսուցման ժամանակ էլ կարևոր են, դասերը կանցնեն ավելի հետաքրքիր ու հագեցած, եթե ներառենք «Կերպարվեստ», «Երաժշտություն», «Մաթեմատիկա», «Ես և շրջակա աշխարհ»-ը ինտեգրված առարկան և այլ առարկաներ:

Տարրական դասարաններում հայոց լեզուն և գրականությունը ներկայացված են ինտեգրված դասագրքով: Նպատակն այն է, որ երեխաները լեզվական գիտելիքներ

ձեռք բերեն գործնական ճանապարհով, տվյալ բնագիրն ուսումնասիրելիս: Ուսումնասիրելով «Մայրենի 2» դասագիրքը՝ հանդիպեցի բազմաբնույթ ճանաչողական նյութերի, որոնք կարող ենք միջառարկայական կապով կապել «Երաժշտություն», «Ես և շրջակա աշխարհ»-ը, «Կերպարվեստ», առարկաների հետ, որոնք նաև հնարավորություն կտան հարստացնելու աշակերտների բառապաշարը: Հանդիպեցի հետաքրքիր պատմությունների, հեքիաթների, երևակայական հերոսների բազմապիսի գործողությունների, առածների, հանելուկների, խրատների: Մայրենի 2 դասագիրքը նպաստում է նաև երեխաների մեջ հայրենասիրություն, արժեքային համակարգի ձևավորմանը, ազգային արժեքների նկատմամբ սեր սերմանելուն:

Տարրական դասարանների մայրենի լեզվի դասագրքերում լայն տեղ է հատկացվում երգարվեստի միջառարկայական կապերի ստեղծմանը: Պրոֆ. Ա. Տեր-Գրիգորյանը իր «Միջառարկայական կապերը մայրենի լեզվի դասերին» ուշագրավ աշխատության մեջ տարբերում է մայրենի լեզվի դասերին երգ-երաժշտության օգտագործման երեք եղանակ: Առաջին, երբ երգը օգտագործվում է որպես ուսումնասիրվող գրական նյութի հիմք: Երկրորդ, երբ երգը կապվում է գրական նյութի հետ որպես նրա ընկալման ու յուրացման օժանդակ միջոց: Երրորդ, երբ երգը անխզելիորեն կապված է ուսումնասիրվող գրական նյութի հետ[4]:

Տարրական դասարաններում մայրենի լեզվի դասերին երգն ու երաժշտությունը կարող ենք օգտագործել մի քանի եղանակներով՝ կապված ուսումնասիրվող նյութի առանձնահատկությունների, բնույթի և ընձեռած հնարավորությունների հետ:

Երգը կամ երաժշտությունը մայրենի լեզվի դասերին կօգտագործենք որպես ուսումնասիրվող նյութի համար հենք: Այսինքն՝ աշակերտներին ուսումնական աշխատանքին նախապատրաստելու, նրանց մեջ մի տեսակ տոնական, ուրախ և հաճելի տրամադրություն ստեղծելու, հաղորդվելիք նյութին հեշտությամբ տրամադրելու, նրանց կողմից նյութն հաճույքով ընկալելու, կայուն ու լավ

[4] Տեր-Գրիգորյան Ա., Մայրենի լեզվի դասը տարրական դասարաններում, Երևան Լույս հր., 1984, էջ 62-69

յուրացնելու նպատակով դասն կարող ենք սկսել երաժշտությամբ: Օրվա դասերը երաժշտությամբ ամփոփելը նույնպես կարևոր նշանակություն կարող է ունենալ երեխայի հոգնածությունը ցրելու, աշխուժացնելու և ակտիվացնելու մեջ:

Ուսումնական աշխատանքում ամեն մի միջոցառում իր որոշակի տեղն ու դերը պետք է ունենա և՛ ժամանակի, և՛ գործադրության տեղի ու ձևի առումով, այլապես այն կդառնա ինքնանպատակ, չի դառնա նրա կայուն բաղադրիչը: Եթե միջառարկայական կապերը հեշտ ու տեղին, չափավոր ու նպատակային չօգտագործվեն, ակամա դրանք կարող են դասի պրոցեսի հիմնական մեխը դառնալ և դասի բուն նպատակը մղել երկրորդ պլանի վրա, դարձնել անկարևոր: Գիտելիքների ձեռքբերումը և կարողությունների ձևավորումը սերտորեն կապված են միմյանց հետ և մեկը մյուսի համար հիմք ու ելակետ են: Հետևաբար, երեխաներին շրջապատի աշխարհի մասին հնարավորին չափ բազմակողմանի ու ընդարձակ տեղեկություններ տալը, ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը կարևոր ու վճռող նշանակություն ունեն երեխաների աշխարհաճանաչողության համար:

Եթե ուսուցիչը ցանկանում է իր պարապած լեզվի դասը լիարժեք ու նպատակային լինի, կամա թե ակամա պետք է դիմի տարբեր գիտությունների տվյալների ու փաստերի օգտագործմանը, որպեսզի դասը հետաքրքրական, ուսանելի ու դաստիարակչական դառնա:

Ուսուցման և դաստիարակման մեթոդները՝ մանկավարժական ներգործության միջոցներ են, որոնք ունեն իրենց նպատակներն ու խնդիրները և իրենցից ներկայացնում են մի ամբողջական ենթակառուցվածք:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները դասավանդողի և սովորողի կանոնակարգված, փոխկապակցված եղանակներ են, որոնք ուղղված են նրանց կողմից կրթական նպատակների նվաճմանը: Յուրաքանչյուր առարկա ըստ իր առանձնա-հատկության պահանջում է դասավանդման և ուսումնառության տարբեր մեթոդների կիրառում: Յուրաքանչյուր առարկայի համար անհրաժեշտ է ըստ

դասընթացի ձևի և նշված թեմաների ընտրել համապատասխան դասավանդման մեթոդը[5]:

Պետք է փաստել, որ այսօր, ժամանակակից մանկավարժության մեջ առկա են բազմաթիվ ուսուցողական և դասավանդման մեթոդներ, որոնց նպատակն է երեխայի մոտ նախադպրոցական տարիքից ի վեր զարգացնել խոսքը, գրաճանաչությունը, զրույցի և մյուս կարողությունների զարգացվածության աստիճանը: Մենք աշխատանքի ուսում-նասիրության ընթացքում անչափ կարևոր տեղ էինք հատկացրել նաև ԽԻԿ համակարգի ուսումնասիրմանն ու դրա գործընթացի բացահայտմանը, քանի որ, որպես այդպիսին, ԽԻԿ համակարգի վերաբերյալ տեղեկությունները մանկավարժական մեթոդիկ աշխա-տություններում և համացանցային աղբյուրներում սահմանափակ էին:

Այսպիսով, աշխատանքի ուսումնասիրության շնորհիվ մենք հնարավորություն ստացանք պատկերացում կազմելու ԽԻԿ համակարգով կազմակերպված մայրենի դասի խթանման փուլում զրույցի կազմակերպման մեթոդական առանձնահատկություններին:

Մայրենի լեզվի ուսուցման կարևոր պայմաններից մեկը Մ. Նալբանդյանը համարել է ընթերցանությունը՝ որպես օրինակելի ու կանոնավոր խոսքի ընդօրինակման, գիտե-լիքների հայթայթման, բառապաշարի հարստացման ու մտահորիզոնի ընդլայնման միջոց: «Կարդալը հարստացնում է մարդու միտքը, խոսելու մեջ վարժվելը հաջողագյուտ է անում նրան, իսկ գրելը սովորեցնում է ճշտություն»,- ասում է Նալբանդյանը[6] միան-գամայն որոշակի դարձնելով մայրենի լեզվի ուսուցման իր առաջադրած սկզբունքները:

Տարրական դասարանների մայրենի լեզվի մեր դասագրքաստեղծ համակազմը, հենվելով մայրենիի տարաբնույթ դասագրքերի բազմակողմանի վերլուծության վրա, հաշվի առնելով նաև ժամանկակից դիդակտիկայի, հոգեբանության, լեզվաբանության, գրականագիտության, լոգոպեդիայի սկզբունքային դրույթներն ու պահանջները, առաջ քաշեց մայրենիի ուսուցման, այդ նպատակին ծառայող մայրենիի դասագրքերի նոր հիմնադրույթ: Մի քանի տարի հանրապետության տարրական դասարաններում այդ դասագրքերով պարապող դասվարների փորձը, մեր դասալսումները, այդ գործընթացում դասագրքի գործառույթների իրականացման մակարդակի

[5] Ю.К. Бабански., Петагогика, 2-е изд. –М., 1988..
[6] Նալբանդյան Մ.,ԵԼԺ, հ. Թ, Երևան, 1948, էջ 45:

ուսումնասիրությունը ապացուցեցին ստեղծված դասագրքերի հիմքում դրված տեսական սկզբունքների արդյունավետությունը:

Կարդալու սկզբնական կարողությունների ձևավորման ընթացքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նոր կարդալ սկսող աշակերտները սովորաբար դժվարու-թյամբ են կարդում այն բառերը, որոնց իմաստը չեն հասկանում, այսինքն՝ այն բառերը, որոնք չկան նրանց բառապաշարում: Այդ իսկ պատճառով տարրական դասարանների, մասնավորապես առաջին դասարանի այբբենարանի և առաջին ընթերցարանի նյութերի բառապաշարն ընտրելիս կարևոր է պարզել այն երեխաների զարգացման աստիճանը, գիտելիքների, բառապաշարի ծավալն ու կառուցվածքը, որոնց համար ստեղծվում են տվյալ դասագրքերը:

Ներկայացնենք միջառարկայական կապերի հաստատման միջոցով իրակա-նացված Վ. Սարգսյան «Մայրենի 2» դասագրքից Վասի «Մասիս» [7] դասի օրինակ.

Առարկա՝ Մայրենի

Դասի թեման՝ «Մասիս»

Դասի նպատակը՝

Ուսուցանող՝ սահուն արտահայտիչ ընթերցանություն, բառերի ճիշտ արտասանություն, նոր բառերի և բառակապակցությունների կազմում,

Զարգացնող՝ զարգացնել կրտսեր դպրոցականների բառապաշարը, գրավոր և բանավոր խոսքը, վերլուծելու, համեմատելու և եզրակացություններ անելու կարողություններ,

Դաստիարակող՝ սեր, հայրենասիրություն սերմանել երեխաների մեջ:

Դասի խնդիրները՝

Ուուցանող՝ համակարգել և խորացնել գիտելիքները Աստվածաշնչի, Մասիս սարի վերաբերյալ,

Զարգացնող՝ բառապաշարի հարստացում միջառարկայական կապի միջոցով, համադրելու և վերլուծելու կարողության ձևավորում,

[7] Սարգսյան Վ., Գրիգորյան Ս., Մայրենի-2, Մանմար հր., Երևան 2014 էջք՝ 122

Դաստիարակող՝ այնպես կազմակերպել ուսուցումը,որ երեխան հասկանա հայրենիքի կարևորությունը:

Դասի կահավորում՝ Մանկական Աստվածաշունչ, նկար «Նոյան տապանն Արարատի վրա», Մ.Սարյան «Գարուն», բառային քարտեր:

Դասի ընթացքը՝

1.Կազմակերպչական մաս: Աշակերտների նախապատրաստում դասին, դասի նպա-տակների և խնդիրների բացահայտում: Կազմակերպչական մասի բովանդա-կություն, ուսուցչի և աշակերտների փոխադարձ ողջունում, բացակաների բացահայտում, աշակերտների պատրաստվածության ստուգում:

2. Տնային աշխատանքների ստուգում: Անցած դասին հանձնարարված էր գրել փոքրիկ պատմվածք «Հայաստանը մեր Հայրենիքն է» վերնագրով:

3.Նոր նյութի հաղորդում:

Խթանման փուլ՝

Աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել նոր նյութի ճանաչողական կողմի վրա: Անցկացնել նախապատրաստական զրույց: Ինչ՞ գիտեմ Հայաստանի, նրա տեսարժան վայրերի, Գառնիի հեթանոսական տաճարի, Սևանա լճի, Մասիս սարի, Հայաստանը խորհրդանշող այլ վայրերի մասին: Ցուցադրել Մ.Սարյանի « Գարուն» բնանկարը:

Տեղկություն տալ այն մասին, թե ինչու ջրհեղեղ եղավ, ինչու է Մասիս սարի գագաթը ծածկված հավերժական ձյան հաստ շերտով, ինչու է կոչվում Նոյան տապան, Մասիս սարի կողքին վեր է սլանում Սիսը, որը իր բարձրությամբ զիջում է Մասիսին: Տեղեկություններ տալ, որ Մասիս սարը համարվում է ծովի մակարդակից բարձր ամենա-բարձր լեռը: Բնագրից դուրս բերել՝ *ամենաբարձր, ամենագեղեցիկ, չար, գիշեր, բարձ-բանալ* բառերը ասելով նրանց հոմանիշներն ու հականիշները: Կարող ենք հանձնարարել հազմել տրված բառերով բառակապակցություններ:Օրինակ՝ ամենաբարձր լեռը:

Նոր ուսումնական նյութի յուրացում արդյունավետ դարձնելու համար մտագրոհի հնարով սովորողներին առաջադրել հարցեր:

1.Ինչպես՞ ջրհեղեղ եղավ;

2.Ինչպես՞ փրկվեց Նոյը:

3.Աստված ինչու՞ էր ուզում կործանել մարդկանց:

4.Ի՞նչ գիտեմ Մասիս սարի մասին:

Ուսուցիչը առանձնացնում է հատկապես այն, որ Մասիս սարին անվանում են Արարատ և, որ Մասիսին նայենք հայի աչքերով, ապա կտեսնենք, որ նա աշխարհի ամենագեղեցիկ սարն է:

<u>Իմաստի ընկալմում</u>՝ ուսուցչուհին ընթերցում է «Մանկական աստվածաշնչից» հատված, որտեղ խոսվում է, թե ինչպես Աստված Նոյին հանձնարարեց փակ նավ պատրաստել և նրա մեջ բոլոր կենդանիներից մի-մի զույգ վերցնել:

Այս փուլում օգտագործվում է խճանկարի մեթոդը:

Ուսուցիչը բաժանում է սովորողներին խմբերի, հանձնարարում է ընթերցել դասի նյութը՝ բաժանված հատվածների: Ընթերցումից հետո ուսուցիչը մի քանի հարցեր է տալիս աշակերտներին.

1. Ինչու՞ Աստված ընտրեց Նոյին:
2. Ինչու՞ Աստված որոշեց պատժել մարդկանց ջրհեղեղով:
3. Ինչպես են գիտնականները ուզում գտնել Նոյան Տապանը Արարատ լեռան վրա:

Աշակերտները պատասխանում են տրված հարցերին, սկսվում է աշխույժ զրույց, քննարկում, բանավեճ: Բնագրից դուրս են գրում ուղղագրական արժեք ներկայաց-նող բառերը՝ *մինչև, աշխարհ, ամենաբարձր, աչք, մեղք, խաբել, քառասուն, անձրև:* Դուրս են գրում անծանոթ բառերը՝ *ստորոտ, տապան, ջրհեղեղ, կործանել, լեռ, գիտ-նական:* Այնուհետև հանձնարարել, որ այս բառերով կազմել նախադասություն-ներ:

Մասիս սարի վրա է կանգ առել Նոյան <u>*տապանը:*</u>

Ջրհեղեղները համարվում են կործանարար <u>*աղետներից:*</u>

Մենք քայլեցինք դեպի <u>*լեռը:*</u>

Հետևել, որ նրանք հաճախակի իրենց բառապաշարում օգտագործեն, որպեսզի ամրապնդվի բառապաշարում:

Գրե՛լ Մասիսը բնութագրող բառեր.



Այնուհետև կազմել բառակապակցություններ Մասիս բառով՝ *հպարտ Մասիս, ալեհեր Մասիս, ձյունածածկ Մասիս,* որոնք նույնպես հարստացնում են աշակերտների բառապաշարը:

Կշռադատում՝ դասի թեման ընթերցելուց հետո օգտագործել T-աձև աղյուսակը:

ի՞նչ գիտեն	ի՞նչ իմացան
կոչվում է Արարատ,	բարձրությունը 5165մ. է,
չգտնվելով ՀՀ տարածքում	հայկական լեռնաշխարհի
համարվում է մեր լեռը,	ամենաբարձր գագաթն է,

Լրացնել աղյուսակը ընթերցելուց հետո, կատարել բառային աշխատանք *Սիս + Մասիս = Արարատ:*

Գրատախտակին գրել և բացատրել անհասկալի բառերը, որպեսզի աշակերտները բառատետրում գրեն և սովորեն:

Կազմել նախադասություններ *Արարատ, Նոյան տապան, ջրհեղեղ* բառերով:

Կազմել պրիզմա՝ հիմք ընդունելով Մասիս բառը:





Այս դասը միջառարկայական կապով կապված է նկարչության, երաժշտության հետ: Քանի որ աշակերտների բառապաշարը համալրվել է *ստորոտ, տապան, լեռ, ջրհեղեղ* բառերով, պատկերացում ունեն արդեն այս բառերի մասին, նկարչության ժամին կարող ենք աշակերտներին հանձնարարել նկարել Մասիսի վրա կանգ առած Նոյան տապանը, կամ իրենց պատկերացմամբ ջրհեղեղի պատկերը, լեռան ստորոտի բնությունը:

Կարող ենք համակարգչով դնել «Մասիս սարը վկա թուրքը ծնկի կգա» երգը ունկնդրեն և փորձեն երգել:

Այսպիսով՝ այս դասը նոր տեղեկություններ ու գիտելիքներ հաղորդեց Հայաստանի տեսարժան վայրերի վերաբերյալ, նոր բառերով հարստացրեց աշակերտների բառապաշարը, միջառարկայական կապեր ստեղծեցինք մայրենի-նկարչություն, մայրենի-երաժշտություն առարկաների միջև: Մայրենիի նմանատիպ դասանյութերի ուսումնասիրությունը երեխաների մոտ ոչ միայն լավ տրամադրություն է ստեղծում, այլ սեր, հետաքրքրություն, հայրենասիրությունն սերմանում: Միջառարկայական կապերի հաստանումը հնարավորություն տվեց ոչ միայն ընդլայնելու աշակերտների ճանաչողական գիտելիքները՝ զանազան տեղեկություններ հաղորդելով Հայաստանի, աստվածաշնչյոն իրադարձությունների, հայկական կոթողների և այլնի մասին, այլև այդ ճանապարհով հարստացնել նրանց բառապաշարը՝ ներմուծելու, բառային նպատակաուղղված աշխատանք կատարելու, մեթոդական համապատասխան կիրառելու միջոցով: Սակայն պարզ է, որ նոր բառապաշարի ուսուցումը չի կարող ավարտել մեկ դասի սահմանում և նոր

բառապաշարը պետք է ամրակայվի և գործուն դառնա՝ անցնի ակտիվ բառապաշար, երկարատև ամենօրյա հետևողական աշխատանքի միջոցով:

Տնային հանձնարարություն:

Սովորել կարդալ, հետևել առոգանությանն և տեմպին, պատմել դասի բովանդակությունը, վերհիշել նիրենց բառապաշարում ավելացած բառնախապատրաստվել դասարանական քննարկմանը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ

2.1. Միջառարկայական կապերի հաստատման միջոցները և դրանց դերը բառապաշարի հարստացման գործընթացում

Նկարն ու նկարչությունը մայրենիի դասագործընթացում

«Միջառարկայական կապերի իրականացումը դպրոցում շատ ծավալուն, բազմաբնույթ և լուրջ աշխատանք է, որն ուսուցիչներից պահանջում է համակարգված գործունեություն, մեծ վարպետություն և հմտություն» միջառարկայական կապերը հասկանալն առավել դյուրին կդարձնի ուսումնական պլաններում ներառված «Ինտեգրված թեմատիկ միավորները տարրական դպրոցում» առարկան: Կերպար-վեստը հանդիսանում է երեխայի մտածողության զարգացման ամանաարադյունավետ գործունեությունը՝ նպաստում է մտածողության զարգացմանը, ակտիվացնում կառուցողական մտածողությունը: Երեխայի մտավոր կարողությունները կարող են զարգանալ ստեղծագործական, կառուցողական տարբեր աշխատանքներ կատարելու ընթացքում: Անձի մտածողության զարգացման հարցում մեծ տեղ է զբաղեցնում ճապոնական հնագույն արվեստի տեսակներից մեկը՝ «օրգիամին»:

Երեխաների բառապաշարի հարստացման գործում բացի մայրենիից հսկայա-կան դեր ունեն «Կերպարվեստ», «Երաժշտություն», «Ես և շրջակա աշխարհ» առարկաները:

Ա .Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան «Ոսկի աշուն» թեմատիկ խմբում Ն. Միքայելյանի «Աշնան նկար», *Հովհաննես Թումանյանի «Տերևաթափ»*, Լիդա Միլևա-յի «Պարահանդես անտառում» ստեղծագործությունը ոչ միայն հնարավորություն, այլև անհրաժեշտություն են ստեղծում մջառարկայական կապեր է հաստատում «Ես և շրջակա աշխարհը» առարկայի հետ: «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասա-գրքում՝ «Բնությունն աշնանը» դասում խոսվում է աշնան գեղեցիկ տեսարանների՝ տերևաթափի, չվող թռչունների մասին: Այս երկու առարկաների միջև միջառար-կայական կապեր հաստատելը բացի աշակերտին ընդհանուր ճանաչողական գիտելիքներով հարստացնելուց, մեծագույն հնարավորություն է ստեղծում բառա-պաշարի հարստացման, հետևաբար նաև խոսքի զարգացման համար:

Կրտսեր տարիքի աշակերտների երևակայությունը անսահման է, և նկարը այդ վերարտադրության լավագույն ձևերց է, որը միաժամանակ նպաստում է երեխայի մտածողության զարգացմանը: Քանի որ մայրենիի ուսուցման հիմնական խնդիրներից են գեղագիտական ճաշակի մշակումը և խոսքի զարգացումը, հետևա-բար այդ խնդիրներից ելնելով՝ կարևորվում է նկարի ու նկարչության տարրերի անհրաժեշտությունն ու կիրառումը մայրենիի դասերին:

Նկարը տարրական դասարանների բոլոր դասագրքերի կարևոր և առանձնա-հատուկ բաղադրիչներից մեկն է: Նկարները լայնորեն օգտագործվում են այբբենա-րաններում, որոնց ծավալի ճնշող մեծամասնությունը կազմում են նկարները:

«Մայրենի 2» դասագրքում տրված հանձնարարականներում կարելի է հանդիպել առաջադրանքների, որոնցում պահանջվում է նյութից դուրս գրել գեղեցիկ, աշակերտներին դուր եկած պատկերներն ու հկարագրությունները, տարվա եղանակները, տերևաթափը, ձյունը նկարագրող արտահայտություններ և պատկերներ: Դասագրքի այս առաջադրանքները մայրենիի ուսուցման գործընացում նկարչու-թյան հետ միջառարկայական կապերի հաստատման հնարավորություն են տալիս: Մենք հնարավորություն ենք ունեցել ներկա գտնվելու այս դասին: Երեխաները նախ դուրս են գրում պատկերավոր նկարագրությունները, ապա փորձում նկարել այն, ինչ պատկերացնում, տեսնում էին դրանք ընթերցելիս: Օրինակ՝ «Օրացույց» բանաստեղծության ուսուցման ժամանակ, որում նկարա-գրորեն բնութագրվում են տարվա գրկում պահված օրերը՝ ըստ չորս եղանակներին բնորոշ պատկերների, հանձնարարվեց առանձնացնել այն պատկերները, որոնց միջոցով նկարագրվում է յուրաքանչյուր եղանակը և համապատասխան այդ պատկերների նկարել տարվա եղանակներից մեկը: Իսկ ահա «Փաթիլներն են բերել երկնքից» պատմվածքը ուսուցանելիս դուրս գրել փաթիլների պարը նկարագրող տողերը և նկարել. «Ճերմակ ու քնքուշ փաթիլները պտտվում էին նազանքով, մոտենում իրար, հեռանում, նորից պտտվում, խռնվում ու մեկ էլ ցրվում թեթև՛ ու սահու՛ն… Դա երկնային պար էր՝ փաթիլների պար...»

Նշանակալի է նաև, «Մայրենի 2»-ում ընդգրկված «Գարուն է, սիրուն է» թեմատիկայի «Անձրևը դասը» ինքնին կարծես նկարչական կտավ լինի, որի վրա երեխան կապույտ երկինք, կանաչ անտառ ու հանդեր, ոսկի արև ու պերճ գույներով ծիածան է նկարում: Այն միջառարկայական կապով կարող ենք կապել «Կերպար-վեստ» առարկայի հետ: Աշակերտները արդեն իսկ ծանոթ են ծիածանի գույներին նրանք նկարել են կերպարվեստի ժամին: Այս դասերի միջոցով աշակերտների բա-ռապաշարում բացի իրենց առօրյայում օգտագործվող

գույներից, կավելանան նաև *նարնջագույն, մանուշակագույն, ամպագույն, արծաթագույն, լազուր* գունանունները, ինչպես նաև՝ *ուռած-փքված, տեղատարափ (Տեղատարափիկ), կաթ-կաթ, անձրևաբեր, հրել-քշել, մութ ու մշուշ, երանգներ* բառերը: Պատկերավոր մտածողու-թյունը կզար-գանա և խոսքը կհարստանա հետևյալ բառակապակցություններով՝ *ոսկի արև, անձ-րևաբեր ամպիկ, արծաթագույն թելիկներ, կաթ-կաթ արցունքներ, մարգարտե ար-ցունքներ, գույնզգույն ծիածան, լազուր երկինք, արագահոս գետ, ամպագույն ձիուկներ*: Այս ամենը կարելի է ամրակայել պատմվածքը և հետո նաև՝ սեփական նկարը պատմելով:

Այս դասի ընթացքում հնարավոր է միաժամանակ կապ ստեղծել նաև «Ես և շրջակա աշխարհը» առակայի միջև, քանի որ դասի շրջանակում ներկայացված է նաև ջրի շրջապտույտը մթնոլորտում:



Ինչպես դժվար չէ նկատել, որ միևնույն դասի ընթացքում հաճախ հնարավոր է իրականացնել միջառարկայական կապեր միաժամանակ մեկից ավելի առարկաների հետ՝ հարստացնելով երեխաների ճանաչողական գիտելիքները, պատկերավոր մտածողությունը, բառապաշարը և զարգացնել խոսք կառուցելու կարողությունները: «Ես և շրջակա աշխարհը» առարկայի հետ միջառարկայական կապի հաստատման շրջանակում բառապաշարի *բոլորովին* այլ շերտ է ուսումնասիրվում, որն իմաստային ինքնատիպ դաշտ է ստեղծում՝ զուգորդվելով մթնոլորտում ջրի շրջապտույտի երևույթի հետ՝ *առու, գետ, ծով, գոլորշի, ամպ, ջուր, անձրև, ձյուն,*

կարկուտ, արև, շրջապտույտ... Այս բառապաշարը գործածվում է նկարը պատմելու ընթացքում և ամրակայվում է համապատասխան համատեքստում կիրառվելով։ Երկու առարկ-անների զուգահեռ կամ հաջորդական կապը մայրենի լեզվի ուսուցման գործընթացում բավական հետաքրքրական երևույթ է, որը լավագույն միջոց է՝ երեխաներին ցուցա-դրելու և մեկնաբանելու համար, որ աշխարհը միասնական է, մեկ ամբողջություն է կազմում, գոյություն ունի ներդաշնակության մեջ, որ աշխարհը գեղեցիկ է, ու այն պետք է սիրել ու պահպանել։

2.2 Օրվա պլան

Ներկայացնում եմ 2-րդ դասարանի «Մայրենի լեզվի» դասագրքում բառապաշարի հարստացումը միջառարկայական կապերով ինտեգրմամբ «Իմ անուշիկ Հայաստան» թեմայում զետեղված Ս.Կապուտիկյանի «Երգ հայրենիքի մասին» հիանալի բանաստեղծության[8] դասապլանի նմուշօրինակ:

Դասի նպատակները՝

Ուսուցողական՝ սահուն, արտահայտիչ ընթերցանություն, բառերի ճիշտ արտասանություն և ուղղագրություն, նոր բառեր և բառակապակցություններ, առարկա ցույց տվող բառեր:

Զարգացնող՝ աշակերտների բառապաշարը, բանավոր և գրավոր խոսքը վերլուծել, համեմատել, եզրակացություններ անել:

Ճանաչողական՝ ճանաչել իրենց հայրենիքը, ՀՀ տեսարժան վայրերը, գիտելիքների ձեռք բերեն Հայաստանի մասին:

Դաստիարակչական՝ սեր և հոգատարություն հայրենիքի նկատմամբ, հայրենասիրության գաղափարը սերմանել:

Դասի կահավորումը՝ Հայաստանի քարտեզը, ՀՀ խորհրդանիշերի նկարների ցուցադրում, պաստառ, համակարգիչ, տեսանյութեր ՀՀ-ի մասին, ՀՀ օրհներգի կատարումը կամ ունկնդրումը:

Դասի ընթացքը՝

Խթանում՝ Հնչում է ՀՀ օրհներգը, աշակերտները երգում են: Անդրադարձ է կատարվում խորհրդանիշներին: Աշակերտները տեղեկություններ են տալիս դրոշի, զինանշանի, օրհներգի մասին: Նշվում է նաև, որ զինանշանի հեղինակը Ա. Թամանյանն է, իսկ նկարիչը՝ Հ. Կոջոյանը:

Կիրառվում է «Մտագրոհ» մեթոդը, որի մեկնաբառը *Հայաստանն* է:

---

[8] Քյուրքչյան Ա.,.Տեր-Գրիգորյան Լ, Մայրենի-2, Էդիթ Պրինտ հր, Երևան 2014, էջ՝131-132

Իմաստի ընկալում՝ Ընթերցվում է բանաստեղծությունը: Ընթերցում են հատվածաբար, քննարկվում է բովանդակությունը, պատասխանում են հարցերին: Վերարտադրե՛լ դասանյութի նկարի բովանդակությունը: Համակարգչով ցուցադրվում է Ս. Կապուտիկյանի նկարը: Աշակերտները անվանում են իրենց գիտեցած բանաստեղծությունները, Հայաստանի մասին: Հարցերի օգնությամբ վերլուծում են բանաստեղծության բովանդակությունը, կարդում են տեղեկություններ Հայաստանի մասին: Երգում են երաժշտության ժամին սովորած «Բարձրիկ Հայաստան» երգը: Կատարվում է բառային աշխատանք, դուրս են գրում նորածանոթ և ուղղագրական արժեք ներկայացնող բառերը՝ *վարդագույն, Երևան:* Պետք է հետևել, որ այս նորածանոթ բառերը երեխաները օգտագործեն առօրյա խոսակցականում, որը կնպաստի նրանց բառապաշարի հարստացմանը: Հանձնարարել կազմել բառակա-պակցություններ, ապա դրանցով կազմել նախադասություններ: Համակարգչի օգնությամբ լրացուցիչ տեղեկություններ հաղորդել պատմական Հայաստանի մասին: Կատարել խմբային աշխատանք, որը կնպաստի աշակերտների բառապաշարի հարստացմանը: Դասարանը բաժանել չորս խմբի:

1-ին խումբը գրում է 4-5 նախադասությունից կազմված շարադրություն Հայաստանի մասին:

2-րդ խումբը բանաստեղծությունից դուրս է բերում ի՞նչ, ինչե՞ր հարցերին պատասխանող բառեր:

3-րդ խումբը նկարում է դասանյութի նկարը:

4-րդ խումբը գունավոր թղթերով պատրաստում է եռագույն դրոշը:

Կշռադատում՝ Այս փուլում կիրառվում է «Պրիզմա» մեթոդը:



<u>Ամփոփում՝</u> Հանձնարարվում է դասանյութը սովորել անգիր, դու՛րս բերել ուղղագրական արժեք ներկայացնող բառերը և գրել: Գրե՛լ շարադրություն «Իմ փոքրիկ երկիրը» վերնագրով, ընդգրկելով այսօրվա բառապաշարում ավելացած *ճերմակ, երամ, ճարել, պատկեր* բառերը:

Այս դասը միջառարկայական կապով կապված է երաժշտության հետ, աշա-կերտներին կարող ենք հանձնարարել, որ նրանք կատարեն այս երգը նաև ե-րաժշտության ժամին:

Միջառարկայական կապով կապված է կերպարվեստի հետ, երեխաները կա-րող են նկարել բնագրին կից նկարը, պատկերեն իրենց պատկերացրած Հայաս-տանը:

Դասը հնարավորություն է ընձեռում միջառարկայական կապ հաստատելու նաև տեխնոլոգիայի հետ, կարելի է հանձնարարել տեխնոլոգիայի ժամին պատ-րաստել Հայաստանի Հանրապետության դրոշը:

Եվ այսպես, այս դասը կրտսեր դպրոցականների բառապաշարը հարստացրեց՝ *ջուրը անուշ, շողը անուշ, արտերը ծով, դաշտերը զով, լեռները վեր, ճերմակ Մասիս, նոր Երևան* բառակապակցություններով, որոնք ավելի ու ավելի

գեղեցիկ, հարուստ կդարձնեն նրանց բառապաշարը: Որպեսզի այս բառերը ամրապնդվեն և դառնան նրանց բառապաշարի անբաժան մասնիկը, կարող ենք հանձնարարել կազմել փոքրածավալ շարադրություն ներառելով այս դասից սերտած բառերը: Հանձնարարել այս բառերով նախադասություններ կազմել: Կերպարվեստի դասաժամին կարող ենք հանձնարարել աշակերտներին նկարել ցորենի ծփացող արտեր, բարձր լեռներ, ճերմակ Մասիս, նոր Երևան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջառարկայական կապերի հաստատման և դրա միջոցով մայրենիի ուսուցման արդյունավետության բարձրացման, աշակերտների բառապաշարի հարստացման հիմնախնդրի վերաբերյալ գիտահետազոտական աշխատանքների տեսական վերլուծությունը և հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս հանգելու հետև-յալ եզրակացություններին:

1. Միջառարկայական կապերի օգտագործումը մայրենիի ուսուցման գործընթացում հնարավորություն է տալիս բարձրացնելու ուսուց-ման արդյունավետությունը և ձեռք բերված գիտելիքներն օգտագոր-ծելու նոր իրավիճակներում, ինչն ապահովում է գիտելիքների հա-մակողմանի յուրացմանը:

2. Միջառարկայական կապերի ստեղծումը մայրենիի ժամին և տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքների միատեղ ուսումնասիրումն ու վերլուծումը հնարավորություն են տալիս ընդլայնելու և խորաց-նելու տվյալ դասի բովանդակության շրջանակները՝ հարստացնելով սովորողների ճանաչողական գիտելիքները և հիմնավորելով նրա համար այն ճշմարտությունը, որ աշխարհը միասնական է, մեկ ամբող-ջություն է, և ամեն ինչ փոխկապակցված է:

3. «Մայրենի 2» դասագրքով ուսուցման գործընթացում հաջո-ղությամբ կարելի է միջառարկայական կապեր ստեղծել երաժշտու-թյան, նկարչության տեխնոլոգիայի, «Ես և շրջակա աշխարհ»-ը առարկայի, նաև մաթեմատիկայի հետ՝ նպաստելով սովորողների համակողմանի և ընդհանուր զարգացմանն ու դասի արդյունա-վետության բարձրացմանը:

4. «Մայրենի 2» դասագրքի աշխատանքներ կարելի է իրականացնել միջառարկայական կապերի հաստատման ճանապարհով ինչպես դասանյութի բովանդակության շուրջ աշխատանքներ իրականաց-նելու, այնպես էլ դասի մեթոդական կառույցում բառային աշխատանք-ների ու խաղերի միջոցով։

5.Միջարկայական կապերի հաստատումը մայրենիի դասագործընթա-ցում մեծ հնարավորություններ է ստեղծում կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման աշխատանքների արդյունավետության բարձրացման և այդ բառապաշարը ակտիվ բառապաշար ներմուծելու համար։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ս. Գ., Աշակերտի խոսքի զարգացումը:
2. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա:
3. Դավթյան Մ. և ուրիշներ, Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ:
4. «Ես և շրջակա աշխարհ»-ը առարկայի 2-րդ դասարանի դասագիրք:
5. Երաժշտության 2-րդ դասարանի դասագիրք:
6. Կերպարվեստ 2-րդ դասարանի դասագիրք:
7. Նալբանդյան Մ., ԵԼԺ, Երևան 1948:
8. «Նախաշավիղ», գիտամեթեդական ամսագիր, ՀՀ կրթության և գիտ. Նախ. ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ:
9. Նալչաջյան Ընդհանուր հոգեբանություն:
10. Նանյան Լ.Ա., Միջառարկայական կապերի իրականացումը տարրական դասարաններում որպես գեղագիտական դաստիարակչության օպտիմալացման միջոց:
11. Սարգսյան Վ., Գրիգորյան Ս., «Մայրենի 2» դասագիրք:
12. Տեխնոլոգիա 2-րդ դասարանի դասագիրք:
13. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա:
14. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Միջառարկայական կապերը մայրենի լեզվի դասերին, Երևան, 1986:
15. Ուշինսկի Կ.Դ., Մանկավարժական ընտիր երկեր
16. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Այբբենարան, Երևան
17. Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., «Մայրենի 2» դասագիրք:
18. Зверев И.Д. Взаимная связ учебхих предметов.
19. Зверев И.Д. Максимова В.Н. Межпредметные связи в современной школе. – М.: Педагогика.
20. Коротков В. М. и др., Межпредметные связи в учебно- воспитательном процессе средней общеобразовательной школе…
21. Максимова, В. Н., Межпредметные связн в процессе обучения, -М. Просвещение

22. Начальная школа”, ежемесячный научно-методический журнал.,

Համացանց

1. http://school.editprint.am/
2. http://festival.1september.ru/articles/577888/
3. http://nsportal.ru/nachalnaya-shkola/russkii-yazyk/2012/10/28/statya-mezhpredmetnye-svyazi-na-urokakh-russkogo-yazyka
4. http://www.moluch.ru/conf/ped/archive/71/4042/

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Նկար 1

Նկար 2

Նկար 3

Նկար 4

Նկար 5

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հարգելի՛ ուսուցիչ, Դուք մասնակցում եք «Կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացումը միջառարկայական կապերի միջոցով» թեմայով իրականացվող հետազոտական աշխատանքի կատարմանը: Խնդրում ենք տրամադրել մի փոքր ժամանակ. Ձեր օգնությունը շատ կարևոր է: Կանխավ շնորհակալ ենք:

1. Բառապաշարի հարստացման նպատակով առավելապես ո՞ր առարկաների դասաժամերին եք միջառարկայական կապեր ստեղծում. ինչո՞ւ:

_____

_____

_____

_____

2. «Մայրենի 2» դասագիրքը ինչպիսի՞ հնարավորություններ է ստեղծում <Ես և շրջակա աշխարհը> առարկայի հետ միջառարկայական կապեր հաստատելու և համապատասխան բառապաշարի հարստացման համար:
   - ☐ լայն հնարավորություններ
   - ☐ բավարար հնարավորություններ
   - ☐ սահմանափակ հնարավորություններ
   - ☐ բոլորովին չի ստեղծում

3. «Մայրենի 2» դասագիրքը ինչպիսի՞ հնարավորություններ է ստեղծում նկարչություն և տեխնոլոգիա առարկաների հետ միջառարկայական կապեր հաստատելու և համապատասխան բառապաշարի հարստացման համար:
   - ☐ լայն հնարավորություններ
   - ☐ բավարար հնարավորություններ
   - ☐ սահմանափակ հնարավորություններ
   - ☐ բոլորովին չի ստեղծում

4. «Մայրենի 2» դասագիրքը ինչպիսի՞ հնարավորություններ է ստեղծում երգ-երաժշտության հետ միջառարկայական կապեր հաստատելու և համապա-տասխան բառապաշարի հարստացման համար:

- լայն հնարավորություններ
- բավարար հնարավորություններ
- սահմանափակ հնարավորություններ
- բոլորովին չի ստեղծում

5. Միջառարկայական կապերի հաստատման արդյունքում ճանաչողական գիտելիքների հարստացման ճանապարհով բառապաշարի հարստացման ի՞նչ միջոցներ եք գործադրում:

_____

_____

_____

_____

6. Միջառարկայական կապերի միջոցով ձեռք բերած բառապաշարի ակտիվացման նպատակով ինչպիսի՞ աշխատանքներ եք իրականացնում մայրենիի դասագործընթացում:

_____

_____

_____

_____

7. Ի՞նչ մեթոդներ եք կիրառում ձեռք բերած բառապաշարի ամրակայման համար:

_____

_____

_____

_____

8. Ձեր կարծիքով ճանաչողական գիտելիքների հարստացման ճանապարհով բառապաշարի հարստացման ուրիշ ի՞նչ ուղիներ կան, որոնք դուք չեք կիրառում:

_____

_____

_____

_____

9. Որքանո՞վ է զննականությունը նպաստում ճանաչողական գիտելիքների հարստացման և բառապաշարի հարստացման գործընթացին:

- ☐ Շատ է նպաստում
- ☐ Քիչ է նպաստում
- ☐ Չի նպաստում

10. Որքանո՞վ են առարկայական նկարները նպաստում բառապաշարի հարստացման գործընթացին:

- ☐ Շատ են նպաստում
- ☐ Քիչ են նպաստում
- ☐ Չեն նպաստում